

ՀԱՅԸ ԲՐՄԱՍՏԱՆՈՒՄ *)

Բրմաստանայ հայերի անցեալ և ներկայ կեանքը մեր ազգի եթէ չասեմ ընդհանրութեանը պիտի ասեմ մեծամասնութեանը անծանօթ է, որովհետև կամ ի մօտոյ ծանօթներն իշխանց ժամանակից չեն կարողացել նուիրեն և կամ թէ հնդկահայոց թւում դասելով, որոշակի չի խօսեցուել Բրմաստանայ հայերի մասին։ Սակայն՝ քանի որ Բրմաստանում հայերը մի առանձին գաղթականութիւն են կազմում և մի առանձին հասարակական ճիւղ են կազմում, հարկաւոր է ըստ կարելոյն ծանօթացնել մՄուրճա-ի յարգելի ընթերցողներին, անցեալից որչափ որ տեղեկութիւններ կարող եմ ձեռք բերել, իսկ ներկայից որչափ որ ծանօթ եմ։

Ա. Հայերի Բրմաստան գաղթելն

Հայերի Բրմաստան գաղթելու սկզբնաւորութեան մասին աւելի հաստատ տեղեկութիւն չկայ, միայն պարուն Թաղէսս Խաչիկ Աւետումեանցն իր աշխատասիրած «Արամայիս» գրքոյ-կի մէջ որ տպագրուած է 1846-ին Կալկաթայում, գրում է հետեւեալն։

«Ի մէջ զանազան ազգաց բնակչաց Բարմայ աշխարհի՝ էր երբեմն զի Ազգն Տլայնայ էր մեծազօրն, որոյ թագաւոր նստէր յընդարձակ քաղաքին Փեղուայ, յորոյ ՚ի բերդամիջի զարդիս արօրադիր լինին երկրագործք։ Արդ՝ ՚ի բարերաստութեան այսը ազգի, բաղումը ՚ի մերայնոց անցին յայս կոյս Գանգեայ, և տեղի բնակութեան կալան՝ ՚ի Սընին **) բաղաք՝

*) Բիբման Հնդկա-2ինի նախկին հոգը մի տէրութիւն է, որ 1886 թուից բրիտանական կալուածք է. գլխաւոր քաղաքներն են Մանդալայ և Բանգալա.

ծ. Խ.

**) Սընին կամ նսրին որ բրմայ ազգը Ցընին է կոչում իսկ անդկխացին Սիրին, մի ընդարձակ թերակզի է, ուր այժմ անզլ զօրաց բերդն է և նաֆուկ գործարաններ կան. մեծ մասն անտառացեալ և անմարդաբնակ է դարձած. շոշնաւակով մերձ մի ժամուայ երթալու ճանապարհ հեռու է նանգունից։

ծ. Հ.

որ կայ յարենելից առ հարաւակողմն Ռանգունայ: Սընին՝ որ-
պէս արդ Ռանգուն, էր նաւահանգիստ, ուր՝ բացի մերայնոց,
յաճախէին անգղիացիք և գաղիացիք և վասն առևտրոյ, ուր
շինեցին վերջինս և զեկեղեցի մի, որոյ երից կողմանց պա-
րիսպէն միայն արդ կանգուն կան *), Ունին և Մերազինք-
զփայտակերտ եկեղեցի, և ժողովուրդն ընդ ամենայն էին իբրև
վաթուն տունք: 'Ի յառնել Դիւցազին Ըլավմիուայի՝ կիսա-
տուածոյն Բարմայից, ընդդէմ Ծլայնի, յաւեր դառնայ Սընին
յամի Տեառն 1756. որպէս և մալրաքաղաքն Փէզու 'ի հետեւալ
ամի, և 'ի տեղի Սընինայ՝ կառուցանէ բազմահանձարս աշ-
խարհակալ զնորն Ռանգուն, որ նշանակէ վաղճան պատերազ-
մի, ուր ժողովին մերազինք ցրուեալը յառաջնոյ անտի:

«Աւելորդ համարիմք յիշել՝ զի եկեղեցի մեր որպէս և
տունք որ 'ի Սընին, հրոյ ճարակ եղեն ամենայն, որպէս և
քաղաքն գլխովին յաւեր և յապականութիւն. սակայն՝ ոչ կա-
րեմք զանց առնել զաղէտալի կատարածիւ Տէր Մարգարայ՝
որպէս և զժամկոչին մեր: Զի՞ որպէս լուաք, 'ի պաշարման
անդ քաղաքին՝ 'ի կոչել զժողովուրդն ձայնիւ զանգակի գալ 'ի
մէջ գիշերի՝ 'ի Տօնախմբութիւն Ծննդեան Տեառն, համարի
Տլայն քաղաքապետն զձայն զանգակին իբրև զնշան յարձակ-
ման տուեալ առ Բրմայս, և առանց հարց ու փորձի հրամայէ
իսկոյն հատանել զզլուխն երկոցունց կարծեալ դաւադրացս: Յա-
ւերակս անդ Սընինայ տեսանի ցարդ գերեզմանատուն ազգիս,
'ի սիշի վայրենացեալ մայրեաց և մացառաց. սակայն կէս տա-
պանաքար և եթ տեսաւ 'ի պատուական սպիտակ մարմարիոնէ,
ունելով միայն զանուն ննջեցելոյն **), ուստի ոչինչ ծանօթու-
թիւն կարևոր եղև քաղել:

*) Սոյն աւերակի երեք կողմի պարխսպները մինչև օրս զեռ կանգնած
են, և մէջ տեղում անտառային մի այնպիսի վիթխարի ծառ է բարձրանում, որ
մի գարեց աւելի տարիների գրաւականն է: Ճատ հետաքրքիր եղայ սոյն աւե-
րակում մի հնաց զանել, սակայն զար է անցել, և բնութիւնը ամեն բան կորցը-
րել է: Որպէս լսեմ՝ մտադիր են անգղիացիք կրկն եկեղեցի հաստատեն նոյն
աւերակն:

Ե. Հ.

**) Այս սպիտակ մարմարիոնէ տապանաքարը որպէս կ'երկի անյատա-
ցել է՝ արդեօք մացաների՝ տակ: Սակայն 15 տարի սրանից առաջ 1889-ին
մի ռանգունարնակ հայ—այժմ հանգուցեալ—պ. Կարապետ Ջաֆրազեան ա-
նոնով, որ նոյն տեղ մեծ գետին կալուածք ունէր, իր սեփական կալուածքի
մօտ երկու հատ անզնա մնացած հայի գերեզմանաքարեր է զննում որձա-
քարից, զեց ոտ. երկանութեամբ, երեք. ոտ. լայնութեամբ և մի թզաշափ հաս-
տութեամբ և ուզում է զերեզմաններն նորոգել տալ և տապանաքարերն հաստա-
տել. սակայն տեղական անգլ. կառավարութիւնը չի թոյլ տալիս, այլ իբրև հը-

«Յայսմ ժամանակի նոր զօրացեալ էին Անգղիացիք յԱրեւելեան կողմունս, և ունէին զվաճառատեղի մի 'ի գլուխն նէդրէջայ, առ երի Բասին քաղաքի, ուր զինի սակաւուց գաղտագողի փոխադրեալ զթնդանօթս ամրացուցանեն ըստ կարևորին: Զինի զօրանալոյ Ըլավմփոյայի հրաման ընկալան Անգղիացիք ունել զնոյն արտունութիւն որպէս առ ժամանակօք Տլայնի. դաշամբ օգնելոյ Բրմայից 'ի ժամու հարկաւորութեան: Սակայն զինի սակաւուց 'ի վտարանջել առաջնոյ ազին, հաւատադրուժ գտեալ Անգղիացւոց ձեռն տան Տլայնի և գրգռեն զիրաւացի ցասումն Յաղթականին: Խորագէտն Գրիգոր որ կայր'ի սպասու

նութիւն պատուիրում է և բերել են տալիս կառուզրութեան Ռանդունայ թանգարանում պահում են, ուր մինչ օրս կանգնած մնում են զեղեցիկ փորագրութեամբ հետեւեալ տապանագրերով.

ա. «Աս է Ցապանն Հուղայնցի, Որդի գորզ Աւաքի, Ցովհաննէս անուն գուշ, որ փոխեցաւ աշխարհն գալի եւ թիմ հաղարի աճի բի եւ 'ի ամսի Արամ գ.-ի:

Aqui está Sepultado o Corpode Joannes Arac de nacado Armenia Natural de Persia ô quo falleceo de Zdade de 4 annos aos 29 de Desembro de 1737 à:

REQUIES CATIN PACE»

(Սրբ ներքն բրմայ լեզուաւ)

բ. «Եղեալ է ասս 'ի շիրմի, Ոսկերառն Քրիստոնէի,
եւ զե՞նէ Լուսաւրչի, գործովն եղեալ յաէտ բարի,
Հետազոտող անանկաց ամենի, վաճառական յոյժ պիտանի,
եւ էր փարթամ ընչիւք կարի. Ազգաւ եղեալ Հուղայնցի,
Պետրոս անուն սս յորջորջի. Որդի եղեալ է Սարուկի,
եւ էս ախօք երեսնամի, Ցան և հօթն մակ աւելի,
Վաղաննեցաւ յայսմ քաղաքի, որ ծորին կ'արտաձայնի,
Ով ոք որ յայսմ հանդիպեսցի. Իվ բերանով տայ ողորմի.
Ցէն Քրիստոս իւրն Ողորմի, Ցաւորդն անեղ Գատաստանի:
Թիմն Ռմէջ թիբայ իբ. օրն շաբաթ:

Aqui est a Sepultadô o Corpo de Coja Petrus de Saruc Natural de Julfa que feudo daylade de 47 annos fallececo Zu 20 de Outubro de 1725.

REQUIES CATIN PACE»

(Սրբ ներքն բրմայ լեզուաւ)

Բացի այս երկու տապանաքարերին, որ անվաս մնացել են մինչև օրս, սրանց մօտ նոյն թանգարանում կայ և մի տապանաքար ցածի կիսից միայն, և այն էլ երկարութեան կողմից երկու կտոր եղած հետեւեալ արձանագրութեամբ.

(Կերի մասը չկայ, միայն հազիւ կարդում է)
«Ցովհաննէս Որդի Զաքարիա թիմ ձժ. Այր ամսի իգ. Aquistá Sepul-

tado o Սորո Զաքարիա Տաթուանացի 1732 Janr 18».

(Ներքն բրմայ լեզուաւ)

Վերջինի մասին հաստատ տեղեկութիւն չկայ ով է գտել. սակայն կար-

ծում են նոյն պ. Ղաֆրազը պիտի ցտած լինի:

Համարմիռայի, դիպող առիթ գտեալ ցուցանելոյ գհաւատար-
մութիւն իւր, հրաման խնդրեալ 'ի զրանէ անցանէ բազմու-
թեամբ բեռնաբարձ նաւակաց ընդ Բասին 'ի գլուխն Նէզրէջայ,
վաճառականութեան աղագաւ, ուր պատուով ընկալեալ յԱն-
գդիսցի վաճառականաց, պարզէ առաջի նոցա ցցուցակ վաճա-
ռաց իւրոց՝ մոմոյ, փողոկրի ևայլն: Խնդրութեամբ կախուն Ան-
գդիսցիք վիսայծն. և զինի սակարկութեան հրաման տայ Գրի-
գոր՝ և հարիւրաւոր անձինք շալակեալ զմեծամեծ ժանիս փողց
բերեն 'ի վաճառատեղին նոցա, ուր հանեալ զթագուցեալն
սուր իւրեանց 'ի ժանեացն տիրապետեն ամրոցին և հիմայա-
տակ առնեն, որով և գլուխն Նէզրէջայ. կայ մնայ առ Բրմայս
ցայսօր ժամանակի: Զայնու ժամանակաւ դեռ 'ի տղայութեան
էր կարողութիւն Ընկերութեան Արևելեան Հնդկաց, այն ինչ
Բրմայից զօրացեալ յոյժ. որոյ վասն ոչ կարացին Անգդիսցիք
առնուլ զվրէծ վասուն մանաւանդ զի չունէին և զարդարացի
իրաւունս:

«Մեծարի Գրիգոր փառօք և պատուով վամն հաւատարիմ
ծառայութեանն, ոչ միայն տիտղոսիւր Վէզրի և պաշտօնատա-
րութեամբ որ ցայն ժամանակ չէր տուեալ ումեք օտտրականի,
այլև կալուածովք բովանդակ քաղաքին Սընինայ մինչև 'ի վաղ-
ճան կենացն: Զինի որոյ ձեռն արկեալ 'ի կառուցումն եկեղեց-
ւոյն Ռանգունայ 'ի գոյից անտի իւրոց, և կեցեալ փառօք
ցվաղճան կենացն, թողեալ է զհետ իւր զմի միայն սերունդ 'ի
դպտեր կողմանէ՝ Գրիգոր Սարգիս Մանուկ, թոռն Աղազարի
Յակոբեան՝ երեսի վաճառականի, 'ի մօր կողմանէ»:

Պարոն Թագէոս Խաչիկ Աւետումն այսչափ միայն տեղե-
կութիւն է տալիս:

Հ. Սանգերմանօ անունով կաթոլիկ մի հոգևորական (ան-
շուշտ իտալացի), որ 1783-ին Բրմաստան է եկել իրըն միասիօ-
նար, իր գրած «Բրմայ ազգի Տէրութեան նկարագրութիւն»
անունով գրքում (որ անգլիերէնի թարգմանուած տպուել է
Հոռվմում 1833-ին) գրում է հայերի մասին, որ 1721-ին, երբ
երկու կաթոլիկ հոգևորականներ են ուղարկուում Բրմաստանաց
կաթոլիկ ժողովրդոց հովուելու (որոնցից առաջ Բրմաստանում եր-
կու փորտուգէտ տրէտ քահանաներ են լինում, մէկը Սիրիեմի մէջ
և միւսն Աւա թագաւորանիստ քաղաքում), երբ այն երկու կա-
թոլիկ նոր հոգևորականները գալիս են Աւա, այնտեղի թագա-
ւորը հետները լաւ է ընթանում աւելացնելով թէ, Հայերից էլ
օգնութիւն են ստանում: Նաև յիշում է որ Սիրիեմի կաթոլիկաց
եկեղեցին (որոյ երեք կողմի պարիսպները դեռ կենում են)
Բրմաստանայ առաջին աղիւսաշէն շինութիւնն է մինում՝ ուղա-

ՃՈ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱտմություն



շինութեանը նպաստում են մի հայ և իր կինը (որը զաւակից զուրկ են (ինում) և անունները մի լատիներէն արձանագրութեան մէջ, որ 1750-ի թուականն ունի, յիշուած է Նիկողայոս Ագուիլար և Մարգարիտ:

Արդ՝ թէ պարոն Թադէոսի և սոյն Հ. Սանգերմանօի գը-
րաճներից և թէ Սիրիեմից դուրս եկած տապանաքարերի յիշա-
տակութիւններից կարողանում ենք իմանալ, որ 1721-ին հա-
յեր եղել են Բրմաստանում հաստատուած, հետևաբար տարի-
ներ առաջ պիտի սկսած լինեն գաղթել, ուստի կարող ենք այն
եզրակացութեան գալ, որ երկու դար աւել է, ինչ հայը սկսել է
գաղթել Բրմաստան. իսկ եթէ էլ աւելի առաջ են սկսել գաղ-
թել, գուցէ կարելի կը լինէր գտնել յիշատակութիւններ պ. Թա-
դէոսի յիշած վէզիր Գրիգորի Ռանգունում շինած մեր եկեղեցւոյ
տումարներում կամ թղթերում, եթէ զոհ չերթային անգլիացոց
Ռանգունայ տիրապետելու պատերազմին քանզի, անգլիացին
Ռանգունն է տիրել, իսկ մեր Ռանգունայ հին եկեղեցւոյ շի-
նութիւնն իր պարունակութեամբ զոհ է գացել պատերազմին:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ. քահ. Ա. ՎԱՐԴԱՆԵԱՆՑ

(Կը շաբանակուի)